ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 185 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 99-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 153-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) և բ) ենթակետերով, Գյումրի համայնքի ենթակայության տակ գտնվող մարզական և մշակութային կազմակերպությունների նորմալ գործունեությունը ապահովելու նպատակով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն վարձակալելու Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N 6/3 հասցեի, «Գյումրու մարզամշակութային կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող շինությունը (անշարժ գույքի նկատման իրավունքների պետական գրանցման վկայական N 13062013-08-0033):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձակալության վարձավճարի չափ սահմանել տարեկան 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ապահովելու սույն որոշման 2-րդ կետում սահմանված վարձավճարի վճարումը:
4. Սահմանել, որ՝

1) վարձակալած գույքի օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են վարձակալության պայմանագրերով.
2) վարձակալած տարածքում իրենց գործունեությունն են իրականացնելու համայնքային ենթակայության Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոցը, «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Հովհաննես Հովհաննիսյանի անվան գրադարանը և քաղաքապետարանի փողային նվագախումբը:
3) Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2010 թվականի մայիսի 25-ի «Գյումրու քաղաքապետարանի «Յուրի Վարդանյանի» անվան ծանրամարտի մարզադպրոցին գումար հատկացնելու մասին» N 99-Ա և 2010 թվականի սեպտեմբերի

2-ի «Գյումրու քաղաքապետարանի ենթակայության «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինության վարձակալության համար գումար հատկացնելու մասին» N 153-Ա որոշումները:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան _____		
Ա. Բադեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Կարապետյան _____		
Տ.Հովհաննիսյան _____		
Վ. Հունանյան _____		
Ն. Մեսրոպյան _____		
Ռ.Մխիթարյան _____		
Է. Մկրտչյան _____		
Վ.Շիրինյան _____		
Ե. Պողոսյան _____		
Մ. Սահակյան _____		
Տ. Փանոսյան _____		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.